# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***Բարձրասրտիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամների մասնակցությամբ Արևելյան Գործընկերության և Եվրոպայի Խորհրդի «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում 2014 թվականի մայիսի 28-ից 29-ը Թուրքիայի Ստամբուլ քաղաքում կազմակերպված՝ գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծության ու հավաստման հաջողված փորձի վերաբերյալ տարածաշրջանային սեմինարի վերաբերյալ***

2014 թվականի մայիսի 28-ից 29-ը Արևելյան Գործընկերության և Եվրոպայի Խորհրդի «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում տեղի է ունեցել ակտիվների հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ տարածաշրջանային սեմինար Թուրքիայի Ստամբուլ քաղաքում, որի նպատակն էր միջազգային փորձագետների և Արևելյան Գործընկերության 6 երկրների՝ հայտարարգրերի ոլորտի 27 մասնագետների մասնակցությամբ՝ հայտարարագրերի վերլուծության ու դրանց տվյալների հավաստման առկա մեթոդների, տեղեկատվության ու փորձի փոխանակումը:

Միջոցառմանը մասնակցել են Արևելյան Գործընկերության երկրների հանրային ծառայողներ, փորձագետներ ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, այդ թվում՝ Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ալեքսանդր Դոբովը, Վրաստանի Քաղաքացիական ծառայության բյուրոյի տնօրեն Կատերինա Կարդավան և տնօրենի տեղակալ Մայա Դվալիշվիլին, Մոլդովայի Պետական հակակոռուպցիոն հանձնաժողովի անդամներ Վեռա Լուպուն և Լեոնիդ Մորարին, Ադրբեջանի խորհրդարանի Վարչական և զինվորական հարցերով վարչության պետի տեղակալ, Հակակոռուպցիոն օրենսդրության բարելավման աշխատանքային խմբի նախագահ Սայադ Քարիմովը, Ադրբեջանի «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ծրագրի տնօրեն Էլվին

Յուսուֆլին, ինչպես նաև Հայաստանի «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն Սոնա Այվազյանը և այլոք: Սեմինարը վարում էին Արևելյան Գործընկերության և Եվրոպայի Խորհրդի «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի գլխավոր խորհրդական Տիլման Հոպպեն և Եվրոպայի Խորհրդի փորձագետ Վալթս Կալնինսը:

***Մայիսի 28, 2014 թվական***

Սեմինարի սկզբում մասնակիցներից յուրաքանչյուրը հանձնել է թեսթ, որի արդյունքում ստուգվել է նրա պատրաստվածությունն ու գիտելիքները հայտարարագրերի վերլուծությանն առնչվող հարցերում: Այնուհետև, Տիլման Հոպպեի և Վալթս Կալնինսի կողմից ներկայացվել է վերջիններիս՝ Արևելյան Գործընկերության և Եվրոպայի Խորհրդի «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում մշակած «Պետական պաշտոնյաների եկամուտների և ակտիվների մշակման ու վերլուծության» գործնական ձեռնարկը, որն ընդգրկում է պետական պաշտոնյաների և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերի ներկայացման, էլեկտրոնային տվյալների բազաների կառավարման, հայտարարագրերի վերլուծության փուլերի ու մեթոդաբանության և այլ բաժիններ:

Միջոցառման ընթացքում քննարկվել են հայտարարագրերի վերլուծության նպատակները՝ անհիմն հարստացումն ու շահերի բախման բացահայտումը, ինչպես նաև հայտարարագրերի առանձին հոդվածների առնչությունը դրանցից յուրաքանչյուրին: Հիմնական ուշադրությունը անհիմն հարստացման բաղադրիչի ուսումնասիրությունն էր, որը հիմնված էր հայտարարագրերում արտացոլված դրամական/կանխիկ միջոցների շարժի հսկողության մեթոդաբանության վրա:

Սեմինարի ժամանակ տեղի են ունեցել կազմակերպիչների կողմից մշակված՝ հայտարարատուների ակտիվներին առնչվող առանձին գործարքների և իրավիճակների վերլուծություններ: Քննարկվել են կեղծ հայտարարագրերի,

թաքնված եկամուտների և կասկածելի գրանցումների բացահայտման գործիքներն ու հնարավորությունները:

Սեմինարի մասնակիցներին ներկայացվել և նրանց հետ միասին քննարկվել է նաև Արևելյան Գործընկերության երկրների հայտարարագրերի վերլուծություն իրականացնող մարմինների գործառույթները, ինչպես նաև հայտարարագրերի տվյալների հավաստման նպատակով պետական և մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության, համապատասխան տվյալների բազաների և լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության ստացման և համադրման հնարավորություններն ու միջազգային փորձը:

***Մայիսի 29, 2014 թվական***

Սեմինարը ներառել է նաև մասնակիցներից բաղկացած 6 խմբերի թիմային աշխատանքներ և դրանց արդյունքների հիման վրա քննարկումներ: Խմբերից յուրաքանչյուրը մտացածին հայտարարատուի և նրա փոխկապակցված անձանց հայտարարագրերի փաթեթի միջոցով պետք է բացահայտեր հայտարարատուի կողմից թաքցված եկամուտներն ու ծախսերը, կեղծ տվյալներն ու գրանցումները և, ի վերջո, անհիմն հարստացման հիմքերը: Խմբերի աշխատանքների արդյունքում բացահայտվել են հայտարարագրերի բազմաթիվ անհամապատասխանություններ, անշարժ և շարժական գույքի առքուվաճառքի կեղծ գործարքներ, ակտիվների ձեռքբերման սխալ արժեքներ, կեղծ շահումներ ու ձեռքբերված ծառայությունների ձևակերպումներ, չգրանցած արժեթղթեր, ապրանքային նշաններից ստացված եկամուտներ և այլն: Սեմինարի ավարտին մասնակիցները կրկին հանձնել են թեսթ, որի նպատակն էր գնահատել սեմինարի արդյունավետությունն ու մասնակիցների համար դրա օգտակարությունը:

Միջոցառման նախատեսված օրակարգից բացի՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները քննարկումներ են ունեցել Արևելյան Գործընկերության և Եվրոպայի Խորհրդի «Լավ կառավարում և

կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի միջոցառման կազմակերպիչների և Արևելյան Գործընկերության երկրների մասնակից կառույցների ներկայացուցիչների հետ՝ համագործակցության ամրապնդման ու համատեղ նոր նախաձեռնությունների իրականացման վերաբերյալ: Մասնավորապես, պայմանավորվածություն է ձեռք բերվել Արևելյան Գործընկերության և Եվրոպայի Խորհրդի «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի կողմից Հանձնաժողովին հետագա տեխնիկական աջակցության տրամադրման և Վրաստանի Քաղաքացիական ծառայության բյուրոյի հետ՝ հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի, տվյալների հավաստման մեխանիզմների ու ռիսկային հայտարարագրերի բացահայտման թեմաների շուրջ համագործակցության վերաբերյալ: